

# ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



## ՎԱՐՂԱՆՈՒՇ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՊՏՀ ապրանքագիտության և տեխնոլոգիայի  
ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու

## ԼԱՐԻՍԱ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՊՏՀ ապրանքագիտության և տեխնոլոգիայի ամբիոնի  
ավագ լաբորանտ, քիմիական գիտությունների թեկնածու

## ՕՍԼԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՆՇԱՍՏԱՅԻ ՍՏԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հոդվածում ներկայացվում են հայկական ազգային սննդամթերքի՝ նշաստայի պատրաստման առանձնահատկությունները: Դիտարկվում են դրա և ցորենի օսլայի ստացման եղանակների տարբերությունները:

**Հիմնաբառեր.** ցորեն, օսլա, ֆերմենտացում, աղացում, լվացում, նստեցում, չորացում, նշաստա, ամիլոզա, ամիլոպեկտին, հիդրոլիզ

Ցորենի վերամշակման մթերքների շարքում իրենց կարևոր տեղ են զբաղեցնում նշաստան և օսլան:

Նշաստա ազգային մթերքը ստացվում է ցորենի թրջմամբ, աղացմամբ, լվացմամբ, նստեցմամբ, չորացմամբ՝ օսլայի տեսքով, նախատեսված է դիետիկ և հանրային սննդում և սննդի արդյունաբերությունում օգտագործելու համար<sup>1</sup>:

Մեր նպատակն է ցույց տալ, որ միևնույն հումքի՝ ցորենի վերամշակման տարբեր եղանակներն են նշաստայի և օսլայի պատրաստման հիմքում:

Ցորենի օսլայի պատրաստման եղանակները նպատակ ունեն ստանալու մթերք՝ արագ և քիչ կորուստներով: Նշենք ներկայումս կիրառվող եղանակներից մի քանիսը:

<sup>1</sup> Տե՛ս ՀՍ 302-2008: Նշաստա. տեխնիկական պայմաններ: ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Եր., 2001:

Առաջինը Մարտենի եղանակն է, որի էությունը հետևյալն է. 25%-ից ոչ պակաս սոսնձանյութ ունեցող ցորենի տեսակային այուրը սկզբում մաղում, հետո խառնում են  $20 \pm 2^\circ\text{C}$  ջերմություն ունեցող ջրի հետ 1 : 0,6 կամ 1 : 0,7 հարաբերությամբ: Ստացվում է պինդ խմոր, որից այնուհետև լվացվում է օսլան, առանձնացվում և չորացվում: Այս դեպքում ցորենի օսլան փոփոխությունների չի ենթարկվում օգտագործվող ջրի ցածր ջերմաստիճանի և գործընթացի կարճատևության շնորհիվ<sup>2</sup>:

Երկրորդը «հարած խմորի» (ԱՄՆ) եղանակն է, որի դեպքում այուրը, կախված որակից, խառնում են  $48-53^\circ\text{C}$  ջերմություն ունեցող ջրի հետ՝ 0,7 : 1 : 1,8 : 1 հարաբերությամբ:

Խառնումը կատարվում է մինչև առաձգական հարած խմորի ստացումը, որից հետո ջրի և խմորի քանակությունները հասցվում է 3 : 1-ի, ապա լվացմամբ հեռացնում են օսլան և չորացնում: Այս դեպքում ևս օսլայի ստացումը կարճատև է, ջրի ջերմաստիճանը՝ համեմատաբար ցածր, բայց օսլայի շրջազանց ջերմաստիճանից ցածր, ուստի օսլան դարձյալ փոփոխությունների չի ենթարկվում<sup>3</sup>:

Ցորենի օսլայի ստացման եղանակներից հաջորդը հատիկը ջրով թրջելը ( $48-50^\circ\text{C}$ ) և  $\text{H}_2\text{SO}_3$ -ի (0,1–0,2%) ավելացումն է<sup>4</sup>: Թրջման տևողությունը 32–50 ժամ է:

Փակված հատիկը մանրացվում է, օսլան նստեցվում, լվացվում և չորացվում:  $\text{H}_2\text{SO}_3$ -ը ավելացնում են մի քանի նկատառումներով.

- հատիկի կենսագործունեությունը դանդաղեցնելու,
- սպիտակուցները քայքայելու,
- որպես հականեխիչ,
- որպես սպիտակեցնող:

Նշաստայի պատրաստման ժողովրդական ավանդական եղանակն է. հատիկի երկարատև թրջում՝ ջրի ամենօրյա փոփոխմամբ (ջերմաստիճանը մինչև  $20^\circ\text{C}$ ), մինչև փակվելը (կախված ցորենի տեսակից՝ 10-20 օր)՝ առանց  $\text{H}_2\text{SO}_3$ -ի ավելացման:

Նշաստայի պատրաստման փուլերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ամենակարևորը թրջման փուլն է, երբ ձևավորվում է նշաստան:

Թրջման նպատակն է փափկացնել հատիկը մինչև կաթնային վիճակը (սեղմելիս պարունակությունը դուրս է գալիս):

Թրջման փուլում ցորենի մեջ ջրի քանակի ավելացումը նպաստում է ֆերմենտների (ամիլոլիտիկ, պրոտեոլիտիկ և այլն) ակտիվացմանը, որոնք էլ նպաստում են կենսաքիմիական՝ հիմնականում հիդրոլիզի գործընթացների (սպիտակուցների, օսլայի և այլն) ինտենսիվացմանը:

Ֆերմենտացման գործընթացները թուլացնում են թաղանթների, միջուկի և սաղմի բջիջների միջև եղած կապերը և օսլայի բջիջների թաղանթները՝ նպաստելով օսլայի հատիկների անջատմանը:

Ինչպես նշվեց, ակտիվանում են հիդրոլիզի գործընթացները ֆերմենտների մասնակցությամբ: Նշաստայի համար կարևորվում է ամիլոլիտիկ ֆերմենտների՝ հատկապես՝  $\alpha$ -,  $\beta$ - ամիլազների ակտիվացումը, որոնք հիդրոլիզում են օսլա բազմաշաքարը (ֆերմենտացում) ցորենի թրջման գործընթացում:

<sup>2</sup> Տե՛ս **Трегубов Н. Н.**, Технология крахмала и крахмалопродуктов. М., 1981:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>4</sup> Տե՛ս **Баханов А. Н.**, Способы получения пшеничного крахмала ЦИНТИ пищепроль. М., 1960:

Ըստ այդմ՝ նշաստան համարվում է դյուրամարս սննդամթերք, լայնորեն կիրառվում է դիետիկ և երեխաների սննդում, պահպանվել է ազգային սննդակարգում:

Նշաստայի՝ վերոհիշյալ եղանակներով ստացվող ցորենի օսլայից տարբերությունը դանդաղորեն ընթացող ֆերմենտացումն է, որը փոփոխության է ենթարկում օսլա բազմաշաքարի հատկությունները:

Օսլա բազմաշաքարը կազմված է ամիլոզից և ամիլոպեկտինից, հետևաբար՝ հիդրոլիզի ժամանակ փոփոխության են ենթարկվում երկու ֆրակցիաներն (խառնուրդամաս) էլ: Այդ փոփոխությունն ի հայտ բերելու համար օգտագործվել է Ուլմանի առաջարկած՝ օսլա բազմաշաքարի՝ ֆրակցիաների բաժանելու խողովակային քրոմատոգրաֆիայի մեթոդը (որպես ադսորբենտ լցվում է ալյումինի օքսիդ)<sup>5</sup>:

Ինչպես հայտնի է, մեթոդը հիմնված է ալյումինի օքսիդի՝ օսլա բազմաշաքարների ջրային լուծույթների ընտրողական ադսորբցիայի վրա, և ամիլոզան ու ամիլոպեկտինը նույնիսկ ադսորբված վիճակում յոդի հետ առաջացնում են համակցված միացություններ:

Օսլա բազմաշաքարների փոխազդեցությունը յոդի հետ բարդ գործընթաց է:

Բ. Ստեպանենկոյի և Ե. Աֆանասևայի աշխատանքներում նշվում է, որ յոդի ռեակցիայի ինտենսիվությունը ամիլոպեկտինի հետ կախված է դրա մոլեկուլային զանգվածից և մեծանում է վերջինիս մեծացմանը զուգընթաց<sup>6</sup>: Համակցված միացության գույնը փոխվում է բացից մինչև մուգ մանուշակագույն երանգներ: Բարձր աստիճանի պոլիմերացված ամիլոպեկտինը և ամիլոզը յոդի հետ առաջացնում են ինտենսիվ կապույտ գունավորումներ: Ինչպես ամիլոզի, այնպես էլ ամիլոպեկտինի շղթաների երկարության կրճատումը հանգեցնում է յոդ-բազմաշաքար համակցության ադսորբցիոն մաքսիմումի տեղաշարժի մանուշակագույն սպեկտրի կողմը:


Այդ փոփոխությունն ի հայտ բերելու համար ալյումինի օքսիդով լցված ապակյա խողովակով բաց է թողնվում օսլա բազմաշաքարի լուծույթը, որի վերևի թթվային մասում (ըստ նեյտրալիզացիայի, 60 մմ) ադսորբվում է ամիլոպեկտինը, իսկ ներքևի հիմնային մասում՝ ամիլոզան: Անալիզի համար պատրաստվել է օսլայի և նշաստայի 1%-ոց դիսպերս լուծույթ, որը տաքացվել է 5 րոպեի ընթացքում տրված ջերմային ռեժիմներում: Այնուհետև լուծույթները պաղեցվել են մինչև 20°C և ցենտրիֆուգվել 30 րոպեի ընթացքում մինչև 6000 պտույտ/րոպե: Ցենտրիֆուգատը զգուշորեն լցվում է փորձանոթի մեջ և 5 մլ անցկացվում ապակյա խողովակով: Քրոմատոգրաֆիական խողովակը մշակվում են 0,0025% յոդով կալիումի յոդիտի լուծույթում՝ ադսորբված բազմաշաքարները բացահայտելու համար: Այնուհետև մշակվում են Na<sub>2</sub>SO<sub>4</sub>-ի 5%-ոց լուծույթով՝ ազատ յոդը հեռացնելու համար, որը նպաստում է օսլայի տարբեր ֆրակցիաների գոտիների գույների վառ արտահայտմանը:

Ստացված քրոմատոգրամների սխեմաներից մեկը ներկայացված է նկար 1-ում:

Քրոմատոգրամի կեսից վերև ամիլոպեկտինի գոտին է, իսկ ներքև՝ ամիլոզի:

<sup>5</sup> Տե՛ս **Бабыченко Л. В.**, Технологическая роль крахмала в процессах пищевых производств /докторская диссертация/. М., 1988:

<sup>6</sup> Տե՛ս **Степаненко Б. Н., Афанасьева Е. М.**, Изучение строения и йодной реакции амилопектинов и кристаллических амилоз картофеля в процессе их созревания при различных агрофонах. Биохимия-1957 г., Г-22, выпуск 1-С, С-305:



**Նկար 1. Ցորենի օսլայի և նշաստայի օսլա բազմաշաքարի քրոմատոգրամների սխեմաները**

- I. ցորենի օսլա (1, 2), ջերմաստիճանը՝ 60 և 90°C,
- II. նշաստա (3, 4), ջերմաստիճանը՝ 60 և 90°C:

Բոլոր քրոմատոգրամների սխեմաներում երևում են օսլայի և նշաստայի գոտիների գունային տարբերությունները:

Բերված սխեմայում նույնպես նկատվում է այդ օրինաչափությունը: Ցորենի օսլան ստացվել է Մարտենի եղանակով, որի դեպքում ամիլոզը և ամիլոպեկտինը փոփոխության չեն ենթարկվում: Իսկ նշաստայի ամիլոզի և ամիլոպեկտինի գոտիները ունեն արտահայտված գունային երանգներ, չնայած երկուսի նմուշները մշակվել են միևնույն ջերմային (60 և 90°C) ռեժիմներում:

Նմուշների շրջացման ժամանակ օսլայի դեպքում ամիլոզի և ամիլոպեկտինի հիդրոլիզի և պոլիմերացման պրոցեսներն ընթանում են չնչին փոփոխությամբ (անկախ ջերմաստիճանից), իսկ նշաստայի դեպքում, քանի որ ֆերմենտացման հետևանքով որոշակի փոփոխության է ենթարկվում ամիլոզի և ամիլոպեկտինի կառուցվածքը, հիդրոլիզի և պոլիմերացման գործընթացներն ավելի ակտիվ են ընթանում, որը պայմանավորված է գոտիների գունային ակտիվությամբ: Ամիլոպեկտինի և յոդի ռեակցիայի ինտենսիվությունը կախված է վերջինի մոլեկուլային զանգվածից և մեծանում է դրա ավելացմանը (պոլիմերացման ժամանակ) զուգընթաց՝ բացից մինչև մուգ մանուշակագույն երանգներ (նշաստա): Ամիլոզը ևս ենթարկվում է պոլիմերացման և հիդրոլիզի. արդյունքում գույնը փոխվում է բաց կապույտից (օսլայի գույնը) մինչև մուգ կապույտ (բարձր պոլիմերացված ամիլոզ) և բաց մանուշակագույն (մասամբ հիդրոլիզված ամիլոզ):

Փորձերի արդյունքների հիման վրա կարելի է անել կարևոր եզրակացություն. նշաստայի երկարատև թրջման հետևանքով ֆերմենտների ակտիվությունը հանգեցնում է հիդրոլիտիկ գործընթացների, այդ թվում նաև օսլայի մասնակի հիդրոլիզի (ֆերմենտացման), որը փոփոխության է ենթարկում ամիլոպեկտինի և ամիլոզի կառուցվածքը և մոլեկուլային զանգվածը:

**ВАРДАНУШ МЕЛИКЯН**

*Доцент кафедры „Товароведения и технологии” АГЭУ,  
кандидат технических наук*

**ЛАРИСА СААКЯН**

*Старший лаборант кафедры  
„Товароведения и технологии” АГЭУ,  
кандидат химических наук*

***Изучение изменения крахмала при приготовлении ншасты.***- Армянский национальный продукт ншаста, приготовленный из пшеницы по народной технологии, отличается от пшеничного крахмала тем, что под воздействием ферментативных процессов ( $\alpha$  и  $\beta$ -амилаз) происходит изменение свойств крахмала.

**VARDANUSH MELIKYAN**

*Associate Professor at the Chair of  
„Science of Marchandise and Technology” at ASUE,  
PhD in Technical Sciences*

**LARISA SAAKYAN**

*Chief Laboratory Assistant at the Chair of  
„Science of Marchandise and Technology” at ASUE,  
PhD in Chemical Sciences*

***The Study of Starch Changes in Making Nshasta.***- The Armenian national product Nshasta made of wheat according to the national traditional technology differs from the wheat starch by the changes of the starch properties caused by enzymatic processes ( $\alpha$  and  $\beta$ -amylases).